



Ա Ր Ա Ր Ա Տ

ԿՐՈՆԱԿԱՆ — ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ — ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ — ՄԱՆԿԱԳԱՐ-
ժԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՊԱՇՏՏՈՆԱԿԱՆ.

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ՌՅԽԵՒ Լ. ՏԱՐԻ

ՉԱԾԱԲ ԲՆՆԵՐՈՐԳ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 1896 Թ.

ԿՐՈՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԱՆՄԵՂ ՄԱՀԱՊԱՐՏԸ.

„Նստեք Երուսաղէմի, մե՛ լայք ի վե-
րայ իմ, այլ լացէք ի վերայ անձանց եւ ի
վերայ որդւոց ձերոց:“

Ղուկ. ԻԳ. 28.

Մարտիկ էք արդեօք կենդանի կերպով
ներկայացնել ձեզ այն բողոքն, երբ
Մեծ վարդապետան իւր վերջին քարոզը խօ-
սեց, իւր այդ ահաւոր ազդարարութիւնն ար-
բաւ աշխարհին: Գողգոթայի ճանապարհի վե-
րայ էր. Երրա առջևից տանում էին խա-
չափայտը՝ ամենասարսափելի տանջանք և մօ-
տալու ախուսափելի մահ նկարուած վրան:

բայց Երրա աստուածային հոգու մէջ կատա-
րեալ խաղաղութիւն էր տիրում անշուշտ.
Գեթսեմանիի թագնապը վաղուց անցել էր և
ամեն հաշիւ աշխարհի հետ վերջացել, մնում
էր միայն յագուրդ տալ մոլորուած ամբոխի
կատաղի կրքերին՝ կատարելագոյն անօրէնու-
թեան դիմաց ամենակատարեալ արդարու-
թեան պատկեր հանդէս բերելով:

Կարո՞ղ ենք... եթէ դարերի ընթացքում
եղել է մի ժամանակ որի մէջ ամենակենդա-
նի կերպով արտափայլէր այդ ահեղ բողոքի
խորհրդաւոր վսեմութիւնը՝ ներկայ ժամանա-
կըն է այդ: Գողգոթայի վերայ բարձրացողը

մարդկութեան Փրկիչը չէ այժմ այլ Նորա թանկագին արեամբ փրկուած մի խեղճ ժողովուրդ՝ ոչ ի հարկ է այնպէս անարատ ինչպէս միակ անմեղն էր կանանց զաւակների մէջ, բայց զրեթէ նոյնչափ անիրաւ տեղը մահուան դատապարտուած: Այո՛, մահուան դատապարտուած... զուր է այլևս խարուսիկ յոյսերով մոլորուելի ողբալ ու ձիչ արձակել. աշխարհը դատապարտել է նորան և ձեռնհաս դահիճներ քաշ են տալիս անարգել դէպի Գողգոթայի բարձունքը. վերահաս մահից Ամենակալի աջը միայն փրկել կարող է: հրաշքով սակայն կամենում է արդեօք փրկել... Թշուառ ժողովուրդի չարատանջ որդւոց համար մի բան միայն կարելի է ցանկանալ ներկայ ըստե՛նում՝ հողւոյ այն երկնային անդորութիւնը որով Կեանքի Առաջնորդը նայում էր ի խաչ հանա աղաղակող ամբոխի վերայ. դառնութեան բաժակը մինչև յատակ քամած է արդէն՝ անմահ յՄաչեցեալի ձշմարիտ երկըրպագուներին: փառաւոր նախնեաց վերջին սերունդին անվայել է արիութիւնը կորցնել և վերջին կաթիլների վերայ դժկամակի:

«Այլ Որդի Մարդոյ երթայ՝ որպէս և գրեալ է վասն Նորա. բայց վայ իցէ մարդոյն այնմիկ, յոյր ձեռս Որդին Մարդոյ մատնեցի»: վայ՛ արդարև վայ՛ ասել պէտք է մեզ այժմ, ո՛չ թէ կենդանի թաղուած երիտասարդների, պատառ պատառ յօշոտուած քահանաների, մահու չափ անպատուած կոյս ու հարսների, որք ու անտէր մանուկների, բանտերում ու պանդխտութեան մէջ, սովից ու վերահաս վտանգից տագնապող հազարաւոր ու բիւրաւոր խեղճերի՝ այլ հեռուում ապահով նստած քրիստոնեայ դատաւորների և նոցա վճիռն իրագործող հերոսների համար: «Եթէ ընդ փայտ զալար զայս առնեն ընդ չորն զինչ լինիցի»: Պիղատոս իւր դատաստանը վերջացրել և ձեռները լուացած մի կողմ է քաշուել. նա լաւ զիտէր, որ անմեղի էր դատապարտում, որ փրշեայ պսակը գլխին, ձեռները կապած մի կալանաւոր թագաւորութեան ձգտել և հասնել

չէր կարող. բայց արժէր հանգիստը վրդովել մի ողորմելի նահատակի համար. ի՛նչ քնաս թէ անմեղ էր չարչարուողն ու խաչուողը՝ միայն երեակայեալ փորձանքը հեռանար իւր զըլխից: Եւ ահա բարձրանում է նա այդ անմեղ նահատակը, դէպի խաչի ստորոտը՝ դէպի մահուան գիրկը և խաչահանունների ու անտարբեր հանգիստես ամբոխի մէջ մի քանի լալկաններ են միայն նորան մխիթարող՝ անզօր օգնութեան ձեռք հասցնելու. իրաւունք չունին նա նոյնպէս կրկնելու այդ մխիթարիչներին. «Մի՛ լայք ի վերայ իմ, այլ լայք է ի վերայ անձանց և ի վերայ որդւոց ձերոց»:

Նայեցէ՛ք դէպի Գողգոթայ, աչքի առաջ բերէ՛ք ըստե՛նում չար ողբերութեամբ արբեցած այդ խաժամուժ ամբոխը, և զիտեցէ՛ք մէջտեղ հանդարտ քայլերով առաջ ընթացող Մահապարտին. մի՛թէ մեղանից ամեն մէկը որ զուրկ չէ բողբոլմին բարոյական, քրիստոնէական զգացումներից, հազար անգամ աւելի պէտք է չգերադասէր Նորա հետ միասին դատապարտուած լինել, տանջանք ու մահ ձաշակել, քան ի խաչ հանա աղաղակողների հետ ապրել պատուի ու փառքի տիրանալ: Ո՛հ, զարհուրելի է շուրջը տիրող անարդարութիւնը, բայց աւելի զարհուրելի մասնակցել այդ անարդարութեան, քան ենթարկուել նորան: Երբաւի եթէ նախախնամութիւնը կամենար մեզ ի նորոյ աշխարհ հրաւիրել, ազգ և հայրենիք ընտրելու ազատութիւն շնորհելով՝ ո՛չ որ մեզանից պէտք է տատամներ չարարազգ ժողովրդի զաւակ դրուելու կրկին. սորա աղէտները զըրսից անտարբեր աչքով դիտելը շատ աւելի անտանելի էր: Զուր չէ Պօղոս Առաքեալը յանդիմանում նորահաւատ նորնթացիներին. «Ընդէ՛ր ոչ դուք զրկիք, և ո՛չ դուք առաւել նեղիք, այլ դուք զրկէք և նեղէք, և այդ զեղբարս և ս»: արդեօք ի՛նչ կասէր նոյն Առաքեալը այժմ՝ հազար տարիներով քրիստոնէութեան մէջ կրթուած, զօրութեան ու ամէն իրաւունքների տէր ազգերի վարժանքը դէպի իրենց եղբայրակիցները տեսնելով:

Մի քրիստոնէի նոյն իսկ հայ քրիստոնէի

Համարներկայ րուպէում ամենաճանր և նուաստացուցիչ հանգամանքն իսկապէս ոչ թէ այն է, որ իւր հաւատակիցները կամ արիւնակիցները բողոքովին անմեղ տեղն արիւն են թափում, այլ որ քրիստոնեայ աշխարհը կարող լինելով մի ակնարկութեամբ կոտորածներին վերջ ապա և մի քրիստոնեայ ժողովրդի կեանքը փրկել ու ապահովել՝ այդ չէ անում: Դնչու... որովհետև քրիստոնէութիւնը վերացել է նորա միջից և անունն է լոկ մնացել... Ծայդ անկարելի է, անկարելի է որ քրիստոնեայ անունն այդչափ նուաստանայ, որ մեր պաշտած գաղափարներն հողի հաւասարութին: Բաղաբականութեան կանգնած հզօր ամբարաակներին ետև բարձրանում, զայրանում, դիզուում են ահա բարոյական անկեղծ ըզզացման, քրիստոնէական զգացման կոհակները, ազգերի խիղճը զարթել՝ որոտաձայն բողոք է բառնում—և արդեօք ամեն արգելք խորտակելով առաջ չի՞ դնայ և բռնաւորների բազուկը չի՞ սասանեցնի: Երէկ չէր, որ ուրիշ հարեան ժողովուրդներ նոյն վիճակի մէջ էին, մահուան գուռն հասած արգէն՝ երբ մի ողորմած ձեռք պարզուեցաւ հիւսիսից և արիւնուռչող գահիճն ստիպուած էր կանգ առնել իւր չար խորհուրդն անզոր ծագիր թողնել: Դնչու և այժմ վերջին րուպէում չի պարզուի նոյն փրկարար, մահարգել ձեռքը... Դսկ եթէ ո՛ւշ լինի այլ ևս... եթէ փրկութեան աւետարներն զամեն կեանք խաւարած և ամեն տուն աւերակի գանեն՝ ամեն անգաստան չոր և անընդունակ նոր պտուղներ բերելու... Տես ինչ է ասում մեր հայրերի հին Աստուածը յուսակտուր մարգարէին. «Զոր օրինակ եթէ զբտանիցի ճիւղ ի մէջ ողկուղոց, և ասիցեն. մի՛ ապականեր զգա, զի օրհնութիւն Տեառն գոյ ի դմա, այնպէս արարից վասն ծառային իմոյ՝ վասն որոյ ոչ կորուսից զամենեսեան»: մի՞թէ այս անգամ ոչ մի օրհնութեան ծիւղ ՚նա իւր այգում պէտք է չպահի, այլ թոյլ պէտք է տայ, որ ամենքը կորուսուին... Աստուած զօրութեանց, զարձ, հայեաց յերկնից և տես այց արա այգույս այսմիկ և դարման տար

ամա, զոր անկեաց աջ քո... «Բայց ոչ իմ կամք, այլ քոյդ լիցին»: ամէն:

կ. վ.



ԱՂՕԹՔԻ ՈՅԺԸ.

«Ստորոհս՝ դու քեզ խնդր ինչ: Գ. Թագ. Գ. 5.

Չկանից ոմանք զիտեն, որ այս խօսքն ասնուած է Սողոմոնի պատմութիւնից: Հէնց որ նա ժառանգեց իւր հօր թագաւորութիւնը, անմիջապէս փառաւոր և խելացի անվհճերութեամբ ոչնչացրեց հասարակական խաղաղութեան դէմ եղած բոլոր արգելքները: Ապա երբ հասաւ նորա զահ բարձրանալու ժամը, նա արեւելեան ճոխութեամբ եկաւ Գարաւոնի պալատը, ուր շատ և երկար ազօթքներից և հարիւրերգնեան զոհ մատուցանելուց յետոյ իւր թագաւորութեան ապագայի համար, որի դաշտերը և քաղաքները տեսնում էր այդ սուրբ սարից, հանդիստ ասնելու քաշուեցաւ: Դսկ զիշերը նա երազ տեսաւ և իմացաւ, որ այդ իւր համար մի ցուցմունք էր:

Աստուած, Որին նա զոհեր մատուցեց, երևաց և ասաց նորան. «Դնդրեան՝ դու քեզ խնդիր ինչ: Դսկ Սողոմոն, որի զիշերային տեսիլքների մէջ պատկերանում էին ցերեկուայ մտատանջութիւնները, խնդրեց Տիրոջից հետեւալը. «Պարգեւեան ծառայի քում սիրտ լսելոյ և զատելոյ զժողովուրդ քո արդարութեամբ, խելամուտ լինել ի մէջ բարոյ և չարի»: 1

Սողոմոն գեռ ևս փոքր էր (հրէից պատմաբանների ասելով 15 տարեկան), երբ մի մեծ ժողովրդի թագաւոր դարձաւ: Նա խնդրեց Աստուծոյ շնորհը, որպէս զի կարողանայ արդարութեամբ կառավարել այդ ժողովուրդը: Եւ Աստուած, ընդունելով նորա իղձերը, տուաւ

1. Գ. Թագ. Թ. 9.